Արձանագրություն N 2

ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.02.2018 թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սողոմոնյան - Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աշխատակազմի գնումների համակարգման հարցերով փորձագետ

Անդամներ՝

Կ. Սիմոնյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բաժնի գլխավոր մասնագետ

Ա. Նալբանդյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության գլխավոր մասնագետ

Ա. Ավալյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Գ. Մոմջյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության գլխավոր մասնագետ

Քարտուղար՝

Ն. Կարապետյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի գնումների համակարգման հարցերով փորձագետ:

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

(Ա. Սողոմոնյան)

Ընդունել ի գիտություն, որ.

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/19, ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացումը կատարվել է «armeps.am» համակարգի միջոցով՝ սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 14-րդ օրը ժամը 11:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք, ՀՀ մշակույթի նախարարություն, 6-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

(Ա. Սողոմոնյան)

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/19» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգին հայտ էին ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1	«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ	Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Վարդանանց 8 էլեկտրոնային փոստ՝ argohshin@mail.ru
2	«Կոտայքնախագիծ» ՍՊԸ	Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան Բարեկամության 2 էլեկտրոնային փոստ՝ abovyanihhg@gmail.com

3	«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ	Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ազատության նրբ., 4 շենք, բն. 75 էլեկտրոնային փոստ՝ stepanyan-andranik@rambler.ru
4	«Արտյոմ Մինասյան» ՍՊԸ	էլեկտրոնային փոստ՝ artyom.minasyan.76@mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

(Ա. Սողոմոնյան)

3.1 Մասնակիցներ՝ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» և «Կոտայքնախագիծ», ՍՊԸ-ների «armeps.am» էլեկտրոնային համակարգ մուտքագրած հայտերում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3.2 «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի «armeps.am» էլեկտրոնային համակարգ մուտքագրած հայտում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են, սակայն մասնակցի հայտում բացակայում է հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3.3 «Արտյոմ Մինասյան» ՍՊԸ-ի «armeps.am» էլեկտրոնային համակարգ մուտքագրած հայտում բացակայում է հրավերի հավելված 3-ը (որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարություն), ինչպես նաև հավելված 2.1-ում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

(Ս. Սողոմոնյան)

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/19» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկած գները ներկայացվում են Հավելված 1-ում.

Հանձնաժողովը որոշեց.

4.1 «ԱՐԳՈՀՇԻՆ և «Արտյոմ Մինասյան» ՍՊԸ-ներին էլեկտրոնային եղանակով ծանուցում ուղարկել առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել սույն արձանագրության 3.2 և 3.3 կետերում նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

* * *

28.02.2018թ.

Ընդունել ի գիտություն, որ «ԱՐԳՈՀՇԻՆ և «Արտյոմ Մինասյան» ՍՊԸ-ներին կողմից հրավերի սահմանված պահանջներին անհամապատասխանությունները շտկվել են:

4.3 Հիմք ընդունելով "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող

ակամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Սողոմոնյան)

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/19» ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան ՀՀ ֆինանսների նախարարություն կողմից եզրակացության տրամադրման և առաջին տեղը զբաղեցնող մասնակիցների որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող 2-րդ աշխատանքային օրը ժամը՝ 10:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական շենք 2-րդ, 6-րդ հարկ ՀՀ մշակույթի նախարարություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Սողոմոնյան
Անդամներ՝		Կ. Սիմոնյան
		Ա. Նալբանդյան
		Ա. Ավալյան
		Գ. Մոմջյան
Քարտուղար՝		Ն. Կարապետյան

Հավելված N 1

ՀՀ Արարատի մարզի Լուսառատ համայնքի Արտաշատ քաղաքատեղիի բաղնիքների և խճանկարների ամրակայման (թանգարանացման) և մասնակի վերականգնման 2018թ նախատեսվող աշխատանքներ				
Նախահաշվային գին	**Մասնակցի անվանումը**		**Առաջարկված գինը ՀՀ դրամով**	
			Առանց ԱԱՀ	**ԱԱՀ-ն ներառյալ**
3 827 800	1	«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ	2 500 000	3 000 000
	2	«Կոտայքնախագիծ» ՍՊԸ	3 100 000	-
	3	«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ	2 916 000	3 499 200
	4	«Արտյոմ Մինասյան» ՍՊԸ	2 749 890	3 299 868